№ 70 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 21 1894 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 21 № 70

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական հարցը Թիւրքաց Հայաստանում. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատգամաւորների ընտրութիւնը. Սովեալների օգտին. Կրօնական ներողամտութիւն. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պապի կոնդակը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ուսուցչական ցէնզի խնդիրը.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՈՐՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Սրանից տասն տասնհինգ տարի առաջ, Թիւրքահայոց ինտելիգէնցիան մի առանձին ոգևորութեամբ և հաւատով դպրոցներ էր բանում Հայաստանի զանազան անկիւններում, հրաւէր էր կարդում աշխարհի բոլոր հայերին՝ օգնել մայր-երկրի լուսաւորութեան գործին. հիմնվում էին թէ կանանց և թէ աղամարդկանց ընկերութիւններ՝ ուսումնարաններ բանալու նպատակով: Կ. Պոլսից, շատ ինտելիգէնտ օրիորդներ, նշանաւոր ժողովրդի կրթական գործին ծառայելու գաղափարով, գնում էին Վանի, Էրզրումի, Մուշի, Խարբերդի կողմերը: Այն ժամանակն էր, որ կազմակերպվեցին „Արարատեան“, „Դպրոցասիրաց“ և վերջապէս „Միացեալ ընկերութիւնները“, մէկը միւսի ետևից բանալով խաւար գիւղերում երկու սեռի վարժարաններ,—մի խօսքով, մի ամբողջ գործունէութիւն, կրթական մի ամբողջ վերածնութիւն...

Իսկ այժմ. այժմ տխուր է պատկերը: Նոր դպրոցներ չեն հիմնվում, անցնում են տարիներ տարիների ետևից և եղած դպրոցների վրա չէ աւելանում և ոչ մի ուսումնարան: Եւ ոչ թէ միայն նորերը չեն բացվում, այլ և շատերը հիմնված դպրոցներից փակվել են, կամ փակվելու վրա են. այն ընկերութիւնները, որոնց նպատակն էր մի ամենահամակրելի գործ,—լոյս տարածել ժողովրդի մէջ,—կաշկանդվեցին, խաւութիւնների հանդիպեցին, սառեցին և նոյն իսկ հիասթափվեցին: Ինքը ժողովուրդը աղքատացած, հարստահարված, ենթակայ պանդխտութեան և սովի, ոչ թէ միայն չէ կարողանում ապահովել իր դպրոցները, այլ միանգամայն յուսահատված, ձեռք է վերցրել նրանից, և թողել բաղդի բերմունքին, ճակատագրին...

Ահա ձեզ մի ժողովուրդ, որ փոխանակ առաջադիմելու, փոխանակ դէպի լաւը ընթանալու, փոխանակ օրից օր աւելի մօտենալու քաղաքակրթութեան գործին,—յետ յետ է գնում, քայքայվում է: Ահա ձեզ մի երկիր, ուր դպրոցների թիւը փոխանակ շատանալու, քչանում է, ուր հողի մշակութիւնը փոխանակ լաւանալու, քանի գնում խոպանում, ամայանում է, ուր մարդիկ փոխանակ վայելելու իրանց աշխատանքի արդիւնքը, քանի գնում է դառնում են գերի աւազակների և հրոսակների, ուր վերջապէս ընդհանուր յուսահատութիւնը, ընդհանուր թշուառութիւնը առաջ է բերում միմիայն զաղթականութիւն, սով, պանդխտութիւն, ամայութիւն, նիւթական և մտաւոր անկում...

Եւ զարմանալի է միթէ, որ մի այդպիսի երկրում դպրոցները շատանալու փոխանակ՝ քչանում, փակվում, քայքայվում են, և ժողովուրդը փոխանակ առաջ գնալու, կաշկանդվում, յետ է մղվում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԷՆԶԻ ԽՆԴԻՐԸ

—

Յայտնի է, որ 1889 թ-ի մարտի 22-ին կայացաւ հետևեալ Բարձրագոյն հրամանը, որ տպված է նաև Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի շրջաբերականի մէջ 1889 թ. № 5:

«Թագաւոր Կայսրը՝ քննելով Ներքին գործերի մինիստրի Բարձրագոյն բարեհայեցողութեան ենթարկած՝ հայկական գործերի մասին խորհրդակցութեան օրագիրը, մարտի 22-ին, ամենաողորմածաբար բարեհաճեց հաւանութիւն տալ այդ օրագրում բացատրված դատողութիւններին և հրամայել.

1) Թոյլ տալ, իբրև ժամանակաւոր կանոն, մինչև առանձին տնօրէնութիւն անելը, որ կարող է կայանալ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի, Ներքին գործերի մինիստրի և Կովկասի կառավարչապետի հետ ունեցած համաձայնութիւնից յետոյ, որ հայ-լուսաւորչական դաւանութեան կրօնագիտութիւնը աւանդվի Կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դպրոցներում հայերէն լեզուով:

2) Հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ ռուսաց լեզուի, պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչներ և վարժուհիներ պէտք է նշանակվեն այնպիսի անձինք, որոնք օրինաւոր ուսուցչական ցէնզ ունեն. բայց թոյլատրել պատրիարքին ընդունել այդ դպրոցներում ուրիշ առարկաների դասատուութեան համար և այն անձանց, որոնք չունեն յիշեալ ուսուցչական ցէնզը, միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը տեղի ունենայ 5 տարվայ ընթացքում: Այդ ժամանակամիջոցից յետոյ ցէնզ չունեցող անձանց առհասարակ չը պէտք է այլ ևս թոյլատրվի դասաւանդութիւնը»:

Ուրեմն այդ ժամանակամիջոցը լրացաւ ներկայ տարվայ մարտի 22-ին:

Թէ ինչու մեր բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, աչքի առաջ ունենալով այդ կարգադրութիւնը և 5 տարի ժամանակը, չէ հոգացել, որ հայոց ուսումնարանների ուսուցիչները աշխատեն վաղօրօք ցէնզ ձեռք բերել, դրա պատճառը մեզ յայտնի չէ: Իրողութիւնը այս է, որ այսօր, երբ այդ օրէնքի զօրութիւնը պէտք է գործադրվի, հայ ուսուցիչների և վարժուհիների մեծագոյն մասը դպրոցներից հեռանալու վտանգին են ենթարկված: Եթէ քննելու լինենք Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի հրատարակած հաշիւը (1892 թ.), կը տեսնենք, որ մեր 197 եկեղեցական ծխական ուսումնարանների մէջ եղել են 74 կրօնուսոյցներ, 329 ուսուցիչներ և 135 վարժուհիներ: Մի կողմ թողնելով կրօնուսոյցներին, որոնց համար ցէնզ չէ պահանջվում, քանի որ կրօնուսոյցների ցէնզը իրանց եկեղեցական աստիճանն է, 464 ուսուցիչներից և վարժուհիներից միայն 132-ը, ուրեմն 30%-ը ուսուցչական ցէնզ ունեն:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութիւնը առաջինն եղաւ, որ ուշք դարձրեց այդ կարևոր խնդրի վրա: Նրա նպատակներից մինը լինելով պահպանել գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները (§ 2, կ. ա.), նրա ուշադրութիւնից, բնական է, որ չէր կարող վրիպել այդպիսի մի կենսական հարց, որի լուծումից կախված է հայոց ուսումնարանների պահպանութեան յարատևութիւնը: Պէտք էր օգնել հայ ուսուցիչներին, որ նրանք պատրաստվէին և քննութիւն տալով ստանային ուսուցչութեան վկայական, բայց այդ տեսակ մի գործ կազմակերպելու համար ընկերութեան միջոցները շատ սուղ էին, և ահա կաթողիկոսական Ցեղապահ Երեմիա եպիսկոպոսը հասաւ օգնութեան և հրամայեց դեռ անցեալ տարվայ սկզբում ընկերութեան տրամադրութեան տակ դնել 1882 թ-ին Թիֆլիսում կայացած առաջին ընդհանուր ուսուցչական ժողովից մնացած գումարը՝ 2250 ռուբլի: Այդ հիման վրա, ընկերութեան խորհուրդը անցեալ տարի ամառը կազմակերպեց Թիֆլիսում և Ախալցխայում մասնաւոր ուսուցչական կուրսեր, որտեղ պատրաստվեցին մօտ 50 հոգի և ծախս եղաւ ընդամենը 891 ռ. 46 կ.: Այդ 50 պատրաստվածներից 10—12 անձինք արդէն ձեռք են բերել ուսուցչական իրաւունք:

Այդ փորձը հաստատ գրաւական էր, որ ձեռնարկած գործը կարող էր աջողութիւն գտնել, եթէ միայն նա դրվի աւելի լաւ հիմունքների վրա: Սակայն պէտք էր սպասել Վեհափառ Կաթողիկոսի դալստեան, մանաւանդ որ Ցեղապահ սրբազանի հրամանը՝ 2250 ռ. յանձնելու մասին, դեռ չէր կատարվել: Անցեալ տարի դեկտեմբերին խորհուրդը դիմեց Վեհափառ կաթողիկոսին, որը կօնդակով օրհնեց ընկերութեան ձեռնարկութիւնը, յանձնեց գումարը և պատուիրեց կազմակերպել ուսուցչական կուրսեր, որտեղ ուսուցիչները կարողանային պատրաստվել քննութիւն տալու համար:

Գործը աւելի աջող կերպով կատարելու համար, խորհուրդը ընտրեց մի մասնաժողով, որի անդամներն էին՝ թեմական տեսուչ Մ. ք. Մելեան և պ պ. Յ. Մելիք-Բէգլարեան, Ա. Քալանթար, Յ. Սպէնդիարեան, Հ. Առաքելեան, Ս. Մալխասեան և Խ. Մալումեան: Այդ մասնաժողովը մշակեց կուրսերի կազմակերպութեան մանրամասն ծրագիրը, որը և ենթարկվեց քննութեան այս տարվայ մարտի 5-ին մի մեծ խառն ժողովի մէջ, որ կայացաւ թեմական առաջնորդի նախագահութեամբ և մասնակցութեամբ խորհրդի և մասնաժողովի բոլոր անդամների, Ներսիսեան և Յովհաննեան ուսումնարանների տեսուչներ՝ Կ. Կոստանեանի, Փ. Վարդանեանի, և բժշկապետ Բ. Նաւասարդեանի: Այդ ժողովը որոշեց մասնաժողովի անդամների թիւը աւելացնել երեքով և ընտրվեցին. պ.պ. Նաւասարդեան, Կ. Կոստանեան և Փ. Վարդանեան: Ուրեմն մասնաժողովը բաղկացած էր 10 հոգուց. միայն պ. Կոստանեան, իր զբաղմունքը պատճառ բերելով՝ խնդրեց աղատ կացուցանել իրան:

Ինն հոգուց բաղկացած մասնաժողովը խորհրդի հետ միասին սկսեց եռանդով գործել մարտի 5-ին հաստատված ծրագրի համաձայն: Այդ ծրագրով որոշված էր.

1) Բանալ Թիֆլիսում, ամարային արձակուրդների ժամանակ, ուսուցչական դասընթացներ, որոնք պէտք է սկսվէին յունիսի 1-ին և վերջանային սեպտեմբերի 10-ին:

2) Խնդրել բարձրագոյն հոգևոր իշխանութեան թոյլատրութիւնը, որ ծխական դպրոցներում պարապմունքները աւարտվեն մայիսի 20-ին, որպէս զի կուրսերը մտնել ցանկացող ուսուցիչները կարողանան յունիսի 1-ին լինել Թիֆլիսում, իսկ եկող ուսումնարանական տարում պարապմունքները փոքր ինչ ուշ սկսվեն, այն է սեպտեմբերի 15-ից, որպէս զի պատրաստվողները հնար ունենան իրանց տեղերը վերադառնալու և քննութիւն տալու:

3) Դասընթացի պարապմունքները պէտք է տեղի ունենան Յովնանեան դպրոցում, իսկ պատրաստվող ուսուցիչները և վարժուհիները պէտք է պատսպարվեն Ներսիսեան դպրանոցում և Գայիանեան ուսումնարանում:

4) Բացվելիք դասընթացի մասին վաղօրօք յայտարարել շրջաբերականներով, թեմական տեսուչների միջոցով, բոլոր ծխական դպրոցների ուսուցիչներին, առաջարկելով, որ քննութեան պատրաստվել ցանկացողները մինչև մայիսի 1-ը գրաւոր կերպով, թեմական տեսուչների միջոցով, յայտնեն իրանց ցանկութիւնը Բարեգործական ընկերութեան խորհրդին, տալով նաև այն տեղեկութիւններն իրանց ուսման և դրութեան մասին, որ կը պահանջէ խորհուրդը: Խորհրդի յայտարարութեան մէջ յայտնել ի միջի այլոց, որ չքաւորները, բացի ձրի ուսումից, բնակարանից և գրենական պարագաներից ազատ կը մնան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Կիրակի, յունիսի 14-ին, Թիֆլիսի բոլոր 23 եկեղեցիներում ժողով էր հրաւիրված՝ պատգամաւորների ընտրութիւն անելու համար:

Այս անգամ համարեա բոլոր եկեղեցիներում հաւաքված էին այնքան ծխականներ, որքան չէին հաւաքվել ոչ անցեալ ընտրութեան, և ոչ նոյն իսկ կաթողիկոսական պատգամաւորների ընտրութեան ժամանակ: Օրինակ, Վանքում եղել են մօտ 200 ծխականներ, Մողնիում աւելի քան 150, Ս. Գէորգ եկեղեցում մօտ 60, Քամոյենց եկեղեցում մօտ 80, Ս. Նշանում՝ մօտ 80, Էջմիածնեցոց եկեղեցում՝ աւելի քան 160, և այլն: Այդ թիւերը ցոյց են տալիս, որ միանգամայն անմատութիւն է եղել այն մարդկանց խնդիրը, որոնք դիմել են Էջմիածին, խնդրելով յետաձգել ընտրութիւնը, ասելով թէ ժողովուրդը ամառանոց է գնացել և ուրեմն ընտրողները շատ քիչ կը լինեն:

Ընտրողները բոլոր եկեղեցիներում բաժանված էին երկու որոշ կուսակցութեան, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր թեկնածուների ցուցակը: Ահա ընտրվածները:

Վանք.—Խահակ Բուզդանեան, Քրիստափոր Վերմիշեան, Նազարէթ Տիգրանեան:

Մողնի.—Բժշկապետ Յ. Դասպարեան, բժիշկ Յ. Լօրիս-Մելիքեան, Յակոբ Թադէոսեան:

Նորաշէն.—Միքայէլ Թամամշեան, Փիլիպոս Վարդազարեան, Գէորգ Աստուածատուրեան:

Զգրաշէն.—Զաք. Կարալեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Ա. Քալանթարեան:

Բէթղեհէմ.—Կ. Ալիխանեան, Լ. Մղեբրեան (հաշտարար դատաւոր), Նիկ. Խոսրովեան:

Ս. Գէորգ.—Գէորգ Բաշինջաղեան, Արշակ Բաղդասարեան, Յակոբջան Ատոմեան:

Քարափի Ս. Գէորգ.—Մարգար Մովսիսեան, Գ. Տէր-Պետրոսեան, Կարապետ Աւագեան:

Հրեշտակապետաց.—Գէդէոն Միրզեան, Մարգար Նազարէթեան, Յովհաննէս Ստեփանեան:

Ս. Սարգիս.—Վանան Սուքիասեան, Գ. Ադելխանեան, Փիրումեան:

Վերայի եկ.—Անդրէաս Բարսեղեան, Խ. Խօջայեան, Տէր-Գրիգորեան:

Քամոյենց.—Ալէքսանդր Քալանթար, Բ. Մէլիք-Ղարագեօզեան, Ալէքսանդր Մէլիք-Ազարեան:

Թանդոյենց.—Գ. Տէր-Յովհաննիսեան, Գրիգոր Գոլոշեան, Դ. Առաքելեան:

Կուկիայի Ս. Աստուածածին.—Ն. Գրիգորեան, Աբրահամեան, Աղունակեան:

Զուղուրէթ. (մեզ յայտնի չէ առայժմ):

Ս. Կարապետ.—Կարապետ Քօչարեան, Լեոն Եղիազարեան, Սարգիս Նունուփարեան:

Ս. Մինաս.—Ալ. Խաչատուրեան, Խաչատուր Մալումեան, Պօղոս Քաթանեան:

Շամքոռեցոց.— Գրիգոր Ղարագեօզեանց, Յովհաննէս Թումեան, Յովհաննէս Շահլամեան:

Զորաբաշի.—Ա. Աբաղեան, Գ. Թարխանեան, Գ. Փարսադանեան:

Նաւթլուղ.—Արշակ Տէր-Գրիգորեան, Յովսէփ Աստուածատուրեան, Յովսէփ Գալստեան:

Ս. Նշան եկեղեցի: Ընտրութիւն չէ եղել: Ժողովականները առաջարկել են նախագահ-քահանային սկզբից որոշել, թէ արդեօք ընտրութիւնները թերթիկներով պէտք է լինեն, թէ տուփերով: Այդ հարցի որոշումը, հրահանգի համա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԷՆԶԻ ԽՆԴԻՐԸ

—

Յայտնի է, որ 1889 թ-ի մարտի 22-ին կայացաւ հետևեալ Բարձրագոյն հրամանը, որ տպված է նաև Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի շրջաբերականի մէջ 1889 թ. № 5:

«Թագաւոր Կայսրը՝ քննելով Ներքին գործերի մինիստրի Բարձրագոյն բարեհայեցողութեան ենթարկած՝ հայկական գործերի մասին խորհրդակցութեան օրագիրը, մարտի 22-ին, ամենաողորմածաբար բարեհաճեց հաւանութիւն տալ այդ օրագրում բացատրված դատողութիւններին և հրամայել.

1) Թոյլ տալ, իբրև ժամանակաւոր կանոն, մինչև առանձին տնօրէնութիւն անելը, որ կարող է կայանալ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի, Ներքին գործերի մինիստրի և Կովկասի կառավարչապետի հետ ունեցած համաձայնութիւնից յետոյ, որ հայ-լուսաւորչական դաւանութեան կրօնագիտութիւնը աւանդվի Կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դպրոցներում հայերէն լեզուով:

2) Հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ ռուսաց լեզուի, պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչներ և վարժուհիներ պէտք է նշանակվեն այնպիսի անձինք, որոնք օրինաւոր ուսուցչական ցէնզ ունեն. բայց թոյլատրել պատրիարքին ընդունել այդ դպրոցներում ուրիշ առարկաների դասատուութեան համար և այն անձանց, որոնք չունեն յիշեալ ուսուցչական ցէնզը, միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը տեղի ունենայ 5 տարվայ ընթացքում: Այդ ժամանակամիջոցից յետոյ ցէնզ չունեցող անձանց առհասարակ չը պէտք է այլ ևս թոյլատրվի դասաւանդութիւնը»:

Ուրեմն այդ ժամանակամիջոցը լրացաւ ներկայ տարվայ մարտի 22-ին:

Թէ ինչու մեր բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, աչքի առաջ ունենալով այդ կարգադրութիւնը և 5 տարի ժամանակը, չէ հոգացել, որ հայոց ուսումնարանների ուսուցիչները աշխատեն վաղօրօք ցէնզ ձեռք բերել, դրա պատճառը մեզ յայտնի չէ: Իրողութիւնը այս է, որ այսօր, երբ այդ օրէնքի զօրութիւնը պէտք է գործադրվի, հայ ուսուցիչների և վարժուհիների մեծագոյն մասը դպրոցներից հեռանալու վտանգին են ենթարկված: Եթէ քննելու լինենք Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի հրատարակած հաշիւը (1892 թ.), կը տեսնենք, որ մեր 197 եկեղեցական ծխական ուսումնարանների մէջ եղել են 74 կրօնուսոյցներ, 329 ուսուցիչներ և 135 վարժուհիներ: Մի կողմ թողնելով կրօնուսոյցներին, որոնց համար ցէնզ չէ պահանջվում, քանի որ կրօնուսոյցների ցէնզը իրանց եկեղեցական աստիճանն է, 464 ուսուցիչներից և վարժուհիներից միայն 132-ը, ուրեմն 30%-ը ուսուցչական ցէնզ ունեն:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութիւնը առաջինն եղաւ, որ ուշք դարձրեց այդ կարևոր խնդրի վրա: Նրա նպատակներից մինը լինելով պահպանել գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները (§ 2, կ. ա.), նրա ուշադրութիւնից, բնական է, որ չէր կարող վրիպել այդպիսի մի կենսական հարց, որի լուծումից կախված է հայոց ուսումնարանների պահպանութեան յարատևութիւնը: Պէտք էր օգնել հայ ուսուցիչներին, որ նրանք պատրաստվէին և քննութիւն տալով ստանային ուսուցչութեան վկայական, բայց այդ տեսակ մի գործ կազմակերպելու համար ընկերութեան միջոցները շատ սուղ էին, և ահա կաթողիկոսական Ցեղապահ Երեմիա եպիսկոպոսը հասաւ օգնութեան և հրամայեց դեռ անցեալ տարվայ սկզբում ընկերութեան տրամադրութեան տակ դնել 1882 թ-ին Թիֆլիսում կայացած առաջին ընդհանուր ուսուցչական ժողովից մնացած գումարը՝ 2250 ռուբլի: Այդ հիման վրա, ընկերութեան խորհուրդը անցեալ տարի ամառը կազմակերպեց Թիֆլիսում և Ախալցխայում մասնաւոր ուսուցչական կուրսեր, որտեղ պատրաստվեցին մօտ 50 հոգի և ծախս եղաւ ընդամենը 891 ռ. 46 կ.: Այդ 50 պատրաստվածներից 10—12 անձինք արդէն ձեռք են բերել ուսուցչական իրաւունք:

Այդ փորձը հաստատ գրաւական էր, որ ձեռնարկած գործը կարող էր աջողութիւն գտնել, եթէ միայն նա դրվի աւելի լաւ հիմունքների վրա: Սակայն պէտք էր սպասել Վեհափառ Կաթողիկոսի դալստեան, մանաւանդ որ Ցեղապահ սրբազանի հրամանը՝ 2250 ռ. յանձնելու մասին, դեռ չէր կատարվել: Անցեալ տարի դեկտեմբերին խորհուրդը դիմեց Վեհափառ կաթողիկոսին, որը կօնդակով օրհնեց ընկերութեան ձեռնարկութիւնը, յանձնեց գումարը և պատուիրեց կազմակերպել ուսուցչական կուրսեր, որտեղ ուսուցիչները կարողանային պատրաստվել քննութիւն տալու համար:

Գործը աւելի աջող կերպով կատարելու համար, խորհուրդը ընտրեց մի մասնաժողով, որի անդամներն էին՝ թեմական տեսուչ Մ. ք. Մելեան և պ պ. Յ. Մելիք-Բէգլարեան, Ա. Քալանթար, Յ. Սպէնդիարեան, Հ. Առաքելեան, Ս. Մալխասեան և Խ. Մալումեան: Այդ մասնաժողովը մշակեց կուրսերի կազմակերպութեան մանրամասն ծրագիրը, որը և ենթարկվեց քննութեան այս տարվայ մարտի 5-ին մի մեծ խառն ժողովի մէջ, որ կայացաւ թեմական առաջնորդի նախագահութեամբ և մասնակցութեամբ խորհրդի և մասնաժողովի բոլոր անդամների, Ներսիսեան և Յովհաննեան ուսումնարանների տեսուչներ՝ Կ. Կոստանեանի, Փ. Վարդանեանի, և բժշկապետ Բ. Նաւասարդեանի: Այդ ժողովը որոշեց մասնաժողովի անդամների թիւը աւելացնել երեքով և ընտրվեցին. պ.պ. Նաւասարդեան, Կ. Կոստանեան և Փ. Վարդանեան: Ուրեմն մասնաժողովը բաղկացած էր 10 հոգուց. միայն պ. Կոստանեան, իր զբաղմունքը պատճառ բերելով՝ խնդրեց աղատ կացուցանել իրան:

Ինն հոգուց բաղկացած մասնաժողովը խորհրդի հետ միասին սկսեց եռանդով գործել մարտի 5-ին հաստատված ծրագրի համաձայն: Այդ ծրագրով որոշված էր.

1) Բանալ Թիֆլիսում, ամարային արձակուրդների ժամանակ, ուսուցչական դասընթացներ, որոնք պէտք է սկսվէին յունիսի 1-ին և վերջանային սեպտեմբերի 10-ին:

2) Խնդրել բարձրագոյն հոգևոր իշխանութեան թոյլատրութիւնը, որ ծխական դպրոցներում պարապմունքները աւարտվեն մայիսի 20-ին, որպէս զի կուրսերը մտնել ցանկացող ուսուցիչները կարողանան յունիսի 1-ին լինել Թիֆլիսում, իսկ եկող ուսումնարանական տարում պարապմունքները փոքր ինչ ուշ սկսվեն, այն է սեպտեմբերի 15-ից, որպէս զի պատրաստվողները հնար ունենան իրանց տեղերը վերադառնալու և քննութիւն տալու:

3) Դասընթացի պարապմունքները պէտք է տեղի ունենան Յովնանեան դպրոցում, իսկ պատրաստվող ուսուցիչները և վարժուհիները պէտք է պատսպարվեն Ներսիսեան դպրանոցում և Գայիանեան ուսումնարանում:

4) Բացվելիք դասընթացի մասին վաղօրօք յայտարարել շրջաբերականներով, թեմական տեսուչների միջոցով, բոլոր ծխական դպրոցների ուսուցիչներին, առաջարկելով, որ քննութեան պատրաստվել ցանկացողները մինչև մայիսի 1-ը գրաւոր կերպով, թեմական տեսուչների միջոցով, յայտնեն իրանց ցանկութիւնը Բարեգործական ընկերութեան խորհրդին, տալով նաև այն տեղեկութիւններն իրանց ուսման և դրութեան մասին, որ կը պահանջէ խորհուրդը: Խորհրդի յայտարարութեան մէջ յայտնել ի միջի այլոց, որ չքաւորները, բացի ձրի ուսումից, բնակարա-

ձայն, ժողովի իրաւունքն էր: Սակայն նախագահը թոյլ չէ տուել, որ ժողովը պարզի այդ հարցը, ուստի և ժողովականները ցրվել են: Հաւանօրէն այդտեղ ընտրութիւն կը նշանակվի կիրակի օր:

Էջմիածնեցոց եկեղեցի: Այդտեղ, նախագահ-քահանայի չնորհիւ, ընտրութեան հետեւանքը մնացել է անորոշ: Ժողովի կիսում, երբ պէտք է սկսէին թերթիկները կարդալ, նախագահը յանկարծ վերցնում է հետը բոլոր թերթիկները և դուրս գնում ժողովից: Ժողովականները կանգնեցնում են քահանային, առնում բոլոր թերթիկները և տանում առաջնորդի մօտ, կնքելով բոլորը մի ծրարի մէջ: Առաջնորդը, անկասկած, ծխականների ներկայութեամբ, կը ստուգի թերթերը և կը յայտնի իր որոշումը:

Լուսաւորիչ եկեղեցի: Այստեղ ընտրողների մի մասը բողոքել է նախագահ քահանայի զեղծումների դէմ և դուրս եկել ժողովից: Բողոքը պէտք է ներկայացվի առաջնորդին: Մնացածները կատարել են ընտրութիւն:

Զրկինեանց եկեղեցի: Ընտրողների մի մասը բողոքել է նախագահի զեղծումների դէմ և դուրս գալով ժողովից՝ բողոք է տուել առաջնորդին (մանրամասնութիւնները «Մշակի» այսօրվայ համարում): Մնացածները ընտրութիւն են կատարել:

Այդպիսով ուրեմն, 23 եկեղեցիներից 19-ի մէջ ընտրութիւնները կատարվել, վերջացել են և բողոքի առիթներ չեն տուել: Մնում են չորս եկեղեցիներ: Դրանցից մի եկեղեցում, այն է ս. Նշանում, բոլորովին ընտրութիւն չէ եղել. Էջմիածնեցոց եկեղեցում ընտրութիւնը կատարվել է, միայն հետեանքը մնացել է անորոշ, որ շատ հեշտ է, ի հարկէ, որոշել՝ քանի որ ընտրողական թերթիկները բոլորը կան: Իսկ Զրկինեանց և Լուսաւորիչ եկեղեցիներում ծխականների մի մասը բողոքել և հեռացել է, և ընտրութիւնը կատարվել է մի մասի ձեռքով: Անկողմնապահ քննութիւնը կը պարզի, թէ որքան արդար են բողոքողները և անչուշտ նոր ընտրութիւն կը նշանակվի:

Այդ է ահա փաստական կողմը այն նշանաւոր ընտրութիւնների, որ առաջ էր բերել իրարանցում և մեծ հետաքրքրութիւն մեր հասարակութեան բոլոր շրջաններում:

Մեզ մնում է չնորհաւորել Թիֆլիսի ծխական ընտրողներին՝ այդ ընտրութեան շատ աջող հետեանքի համար:

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երեանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Վերին-Ագուլիսից, այնտեղի դպրոցների աւագ-ուսուցիչ Յարութիւն Կարապետեանի միջոցով, 57 ռուբլի, որ հանգանակել է ուսուցիչների, աշակերտների և աշակերտուհիների մէջ:

2) Բալախանից, Ալէքսանդր Աբէլեանի միջոցով, 40 ռուբլի, որ հանգանակված է «Կովկասեան Նաւթային ընկերութեան» նաւթահանքի ծառայողներից և մշակներից:

3) Թիֆլիսից, Մատթէոս Փելօեանցի միջոցով, հանգանակված 11 ռուբլի 10 կոպէկ:

Ուրեմն նախկին 509 ռուբլի 59 կ. հետ այժմ ունենք 617 ռուբլի 69 կոպէկ:

Այսօր, յունիսի 21-ին ուղարկեցինք.

1) Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւղին, գաղթականների համար 100 ռ.:

2) Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի խորհրդին, եկեղ կարօտեալների համար՝ 80 ռ.:

Մեզ մնաց մնաց 437 ռուբլի 69 կոպ:

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6568 ռուբլի 54 կ.:

Ուղարկել ենք 6131 ռուբլի:

ԿՐՕՆԱԿԱՆ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի «Недѣля» շաբաթաթերթը, նուիրելով մի հետաքրքիր առաջնորդող յօդուած կաթոլիկ և բողոքական հոգևորականութեան ուղղափառ եկեղեցու փոխադարձ յարաբերութիւններին, ասում է, որ նախկին սուր յարաբերութիւնները այդ եկեղեցիների մէջ վերացվում են: Խօսելով ռուսաց բողոքականների մասին, շաբաթաթերթն ասում է. «Բալտեան երկրում վերջին տարիներս արուեստական կերպով ստեղծվեց լութերական հարցը, այնպէս որ բողոքական և ուղղափառ եկեղեցու փոխադարձ յարաբերութիւնները շատ սուր կերպարանք էին առնում: Այդ հարցի ծագման աղբիւրը էստոնների և լատիշների ձգտումն էր ուղղափառութիւնն ընդունելու, վարչութեան հովանաւորութիւնն այդ շարժմանը և լութերական պաստորների ջանքերը՝ պահել նրանց իրանց կրօնի մէջ: Պատահում է, որ գիւղացիները ուղղափառութիւնն ընդունում են առերես, յուսալով հողային արտօնութիւններ ձեռք բերել և ապա կրկին կատարում են լութերական ծէսեր, որը արդէն քրէական գործ է համարվում:

«Նորերս քննվում էին երկու ընտրոյթ գործեր, որոնց միջամտեց Բարձրագոյն ողորմութիւնը: Վօլգուտեան համայնական տանուտէր Պէդայա և նրա կինը Բիգայի դատարանի կողմից դատապարտվեցին երկու ամսվայ բանտարկութեան այն բանի համար, որ իրանց երեք երեխաներին նրանք կրթում էին լութերական կրօնով: Նահանգական դատարանի վճռի համաձայն, այդ երեխաները պէտք է խլվէին ծնողներից և յանձնվէին ուղղափառ ազգականներին՝ ուղղափառ կրօնի մէջ կրթելու համար նրանց: Բարձրագոյն բարեհաճութեամբ, Պէդայա ամուսինների վերաբերմամբ նահանգական դատարանի վճիռը՝ իր բոլոր կէտերում՝ վերացված է:

«Մի ուրիշ գործում պաստօր Բիզէ մեղաւոր էր ճանաչված, որ պակի արարողութիւն էր կատարել «խառնվածների», այսինքն այնպիսի հարս և փեսայի վրա, որոնք իրանց աւետարանական-լութերական դաւանութեան պատկանող էին համարում, թէպէտ և ուղղափառ հոգևորականութիւնը յայտնում էր, թէ նորապսակներից մէկը ուղղափառ դաւանութեան է պատկանում: Նոյն պաստօր Բիզէ պատասխանատուութեան ենթարկվեց՝ մկրտութեան խորհուրդը կատարելու համար վերոյիշեալ պակից ծնված երեխայի վրա, և դատապարտվեց ութ ամսով պաշտօնից հեռացվելուն: Իսկ այդ դատաստանական գործին առիթ տուող ամուսինների համար պակը անկանոն ճանաչվեց՝ իր բոլոր հետեանքներով: Այդ ամուսինների ամենահպատակ միջներով: Այդ ամուսինների ամենահպատակ միջներով: Բարձրագոյն հրամայեցվեց՝ թողնել նրանց իրանց պակի և հաւատի մէջ:

«Այդ Բարձրագոյն չնորհը մեծ ուրախութիւն կը պատճառի ռուսաց լութերականներին, որպէս լուծումն այն ծանրատար հարցի, որը շատ ցաւալի տարակուսանքներ էր մտցնում հաւատի գործի մէջ: Թէպէտ և օրէնսդրութիւնը անտի փոփոխ է մնում օտարադաւանութեան և դէպի ուղղափառութիւնը նրա ունեցած յարաբերութիւնների վերաբերմամբ, բայց Բարձրագոյն կամքով կարծես թէ նախագծվում է դէպի նրա զարգացումն տանող ճանապարհը: Այդ հարցի վերաբերմամբ եղած օրէնսդրութիւնը հին ծագում ունի և նրա մէջ արտայայտվում է ս. եկեղեցու վրա ունեցած հին հայեացքը: Հնում, խիստ բարքերի, հարկադրիչ իրաւունքների և նրանց յարաբերութիւնների ժամանակ բնական էր թվում տիրող հաւատի յաղթանակը տանել արտաքին, նիւթական միջոցներով: Մեր ժամանակ հոգևոր հեղինակութեան զերադասութեան վրա մեր ունեցած հայեացքը ուրիշ է. ներքին համոզմունքի և խղճմտանքի գործում հարկադրիչ միջոցները աննպատակայարմար և անհամապատասխան են թվում կրօնի բարձր արժանաւորութեան համար: Քրիստոնէական վարդապետութիւնը անսահման ներողամիտ է դէպի մոլորվածները և անհաւատները, և այդ ողորմաթիրտ ներողամտութեանը քրիստոնէութիւնը պարտական է իր անսահման յաղթութիւններով: Զանազան դաւանութիւններին պատկանող բազմաթիւ ժողովուրդներ ունենալով, ռուսաց պետութիւնը իր իմաստուն ներողամտութեամբ դէպի օտարադաւանութիւնը՝ կարող է ցանկալի յարգանքը ներշնչել դէպի տիրապետող կրօնը»:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 յունիսի

Ամիս 19-ին, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական պատգամաւոր ընտրելու համար, նշանակված էր ծխական ժողով և Զրկինեանց եկեղեցում, նախագահութեամբ նոյն եկեղեցու ծխատէր քահանայ տէր-Ներսէս Տէր-Բարսեղեանի: Թէ յիշեալ քահանան ինչպէս էր կազմել ծխականների ցուցակը, ինչպէս էր հրաւիրել նրանց և ինչ եղանակով էր կամենում կատարել ընտրութիւնը, այդ ես, իբր ծխական, հարկ եմ համարում լրագրութեան միջոցով յայտարարել ի գիտութիւն թէ բարձր հոգևոր իշխանութեան և թէ հասարակութեան: Ահա թէ բանը ինչումն է. ժողովի նիստը բացվելուց յետոյ ակներև պարզվեց հետեեալը. նախ՝ որ նոյն եկեղեցու տէր-Սիմէոն քահանայի ծխականները, թւով մօտ 80, բոլորովին չեն հրաւիրված. երկրորդ՝ հէնց իրան՝ նախագահ քահանայի մի քանի ծխականները նոյնպէս չեն հրաւիրված, և ինչպէս առաջինները՝ մինչև անդամ ցուցակի մէջ էլ չեն գրված. երրորդ, այդ չը հրաւիրված ծխականներից եօթը մարդ, լինելով պատարագին և կողմնակի կերպով իմանալով, որ այդ օրը լինելու է պատգամաւորական ընտրութիւն, մնացել էին, որպէս զի մասնակցեն ընտրութեանը, բայց նախագահը առաջարկեց նրանց անմիջապէս թողնել ժողովը և դուրս գնալ եկեղեցուց, բացատրելով, թէ քանի որ նրանց անունները ցուցակի մէջ չեն գրված, ընտրութեանը մասնակցել չեն կարող: Ժողովականներից և Բարեգործական ընկերութիւնը միայնակ անկարող էր գլուխ բերել այդ գործը, եթէ կողմնակի օգնութիւն և աջակցութիւն չը գտնէր, մանաւանդ որ ժառդրութիւն կար այդ ժամանակաւոր կուրսերը դէթ մի քանի տարի ունենալ: Այդ նպատակով խորհուրդը բարւոք համարեց դիմել մեր ազգային գլխաւոր հաստատութիւններին և նրանց աջակցութիւնը խնդրել, այն է՝ Ներսիսեան, Յովնանեան ուսումնարանների հոգաբարձութիւններին, Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան և Հայաստեաց Բարեգործական ընկերութեան: Առաջին երկուսը մերժեցին խորհրդի հրաւէրը և զլացան որ և է նիւթական օժանդակութիւն տալու, իսկ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը մերժեց մինչև անդամ ամարային արձակուրդների ժամանակ պատսպարել ուսուցիչներին իր չէնքի մէջ: Մեծ համակրութեամբ վերաբերվեցին Մարդասիրական ընկերութիւնը և Հայաստեաց Բարեգործական ընկերութիւնը. առաջինը ուղարկեց 800 ռուբլի, երկրորդը որոշեց տալ 200 ռուբլի: Բայց ամենամեծ համակրութիւն ցոյց տուեց Թիֆլիսի հայ հասարակութեան ինտելիգենտ հարուստ դասակարգը, նուիրելով մի քանի օրվայ ընթացքում այդ նպատակի համար մօտ 2500 ռուբլի:

Մարտի 14-ին խորհուրդը դիմեց Էջմիածնի ուսումնարանական վարչական յանձնաժողովին և բոլոր թեմական տեսուչներին, հաղորդելով վերոյիշեալ որոշումները և խնդրելով տեղեկութիւններ հաղորդել որքան կարելի է չուտով: Շնորհիւ ուսումնարանական յանձնաժողովի կարգադրութեան, բոլոր թեմական տեսուչները և առաջնորդները փութացին կատարել խորհրդի խնդիրքը և հաղորդել հարկաւոր տեղեկութիւնները, այնպէս որ մայիսի 20-ին մանաժողովը կարողացաւ արդէն ցուցակ կազմել: Կազմվեցին 3 ցուցակներ. 1) այն ուսուցիչների և վարժուհիների, որոնք ցանկանում էին գալ Թիֆլիս և մրցանել կուրսերը. այդպիսիների թիւը 123 էր. 2) այն ուսուցիչների և վարժուհիների, որոնք նպատ էին խնդրում իրանց բնակավայրերում պատրաստվելու. դրանց թիւը 13 էր. 3) այն երկու սեռի մանչերի, որոնք նոյնպէս ցանկանում էին մտնել կուրսերը. դրանց թիւը 22 էր և ըստ մեծի մասին թեմական դպրոցները և ճեմարանը աւարտած անձինք էին, թէև ոչ ուսուցիչներ:

Այդ 3 ցուցակից մանաժողովը կազմեց վերջնական ցուցակ, իբրև սկզբունք ընդունելով՝ խնդրատու ուսուցիչներից հրաւիրել կուրսերը մտնելու կամ նպաստ տալու նրանց, որոնք աւարտել են ճեմարանի դպրոցական դասընթացը կամ լսարանները, թեմական դպրոցները, գիմնազիաներն ու պրոգիմնազիաները, և հայոց իգական դպրոցները նախկին ընդարձակ կուրսով և իբրև բացառութիւն նրանց, որոնք թէպէտ վերոյիշեալ տեղերում չեն աւարտել, բայց երկար ժամանակ պաշտօն են վարել արդիւնաւոր կերպով: Այդ պայմաններին բաւականութիւն տուող երկու սեռի խնդրատուներից դուրս եկան ընդամենը 89 հոգի, որոնց մասին ժողովը որոշեց՝ կուրսերի բացման թոյլատրութիւնը ստանալուն պէս՝ Թիֆլիս հրաւիրել կամ նպաստել:

Իսկ թոյլատրութիւն ստանալու համար դեռ ապրիլի 8-ին խորհուրդը դիմեց պ. Նահանգապետին և հոգաբարձու պ. Եանովսկուն: Նահանգապետի կողմից ոչ մի արգելք չը նկատվեց, իսկ պ. հոգաբարձուն, նախ քան թոյլատրութիւն տալը, պահանջեց ներկայացնել կուրսերի համար մի կառավարիչ և պատասխանատու անձն: Այդ պաշտօնի համար ընտրվեց և առաջարկվեց պ. Յովսէփ Մելիք-Բէգլարեանը, իբրև հմուտ մանկավարժ, և նրան օգնական կարգվեց պ. Ե. Սպէնդիարեանը: Վերջապէս, մայիսի 28-ին ստացվեց պ. հոգաբարձուի թոյլատրութիւնը կուրսերի բացման մասին՝ մի շարք պարտաւորիչ պայմաններով: Պ. հոգաբարձուն, կամենալով յարմարեցնել այդ կուրսերը տիրող օրէնքների պահանջներին՝ առաջարկում էր կազմակերպել կուրսեր իբրև ուսուցչական ժողով, ունենալով և օրինակելի դպրոց, որտեղ հայոց ծխական եկեղեցական ուսումնարանների ուսուցիչները փորձնական դասեր տային և գործնականապէս վարժվէին դասաւանդութեան մէջ և ապա մի քանի այնպիսի պայմաններ, որոնց գործադրութիւնը թէև օգտակար, բայց ներկայ հանգամանքների մէջ անիրագործելի էին:

Քննելով այդ առաջարկութիւնը, խորհուրդը, մանաժողովի կարծիքը լսելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ այդ ձևով բացված կուրսերը խիստ նպատակայարմար և օգտակար են այն ուսուցիչների համար, որոնք արդէն ցէնզ ունեն և մանագիտական մանկավարժական պատրաստութիւն, և այդպիսով կուրսեր բանալը, մանաւանդ օրինակելի դպրոց կազմակերպելը, կարօտ է թէ մեծ ծախսի և թէ ժամանակի: Այդ հիման վրա խորհուրդը որոշեց օգուտ քաղել պ. հոգաբարձուի թոյլատրութիւնից մի աւելի աջող ժամանակ, իսկ այժմ թողնել կուրսեր բանալու դիտաւորութիւնը:

Սակայն, որպէս զի ուսուցիչները չը մնան անօգնական և կարողանան գոնէ առանին կերպով պատրաստվել, խորհուրդը որոշեց մասնաւոր կերպով նպաստ տալ նրանց՝ քննութեան համար պատրաստվելու, և այդ նպատակով հրահանգ տուեց ընկերութեան ճիւղերի Երեանի, Շուշու, Ախալցխայի, Կարսի և Ալէքսանդրոպոլի տեղական վարչութիւններին, ինչպէս և Շամախի, Բագուի հայոց դպրոցի տեսուչ Հ. Ղուկասեանին, որոնց և պէտք է դիմեն ցուցակագրված ուսուցիչները գաւառներում, իսկ Թիֆլիսում՝ խորհրդին:

Ահա ամբողջ գործի պատմութիւնը:

Այս տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Բարեգործական ընկերութիւնը գործել է, և ոչինչ միջոց, ջանք, եռանդ չէ խնայել աջակցելու մի այնպիսի կարևոր գործին, ինչպիսին է մեր դպրոցների ուսուցիչների ցէնզի խնդիրը:

Ա.

ները բողոքեցին նախագահի վարմունքների դէմ և պահանջեցին, որ գոնէ իրանց կամքով եկած ծխականներին թոյլ տայ մասնակցելու ընտրութեանը ու չը զրկի նրանց իրանց իրաւունքից: Նախագահը թէև չը կարողացաւ հերքել փաստը, բայց դարձեալ յամառութեամբ հրաժարվեց բաւարարութիւն տալ ժողովականների իրաւացի պահանջին: Այժմս հարց է. միթէ նախագահ քահանան, որին հոգևոր իշխանութիւնը վստահացել էր պատիրել կազմել եկեղեցու բոլոր ծխականների ցուցակը, պատահմամբ կարող էր չը գրել ցուցակում և չը հրաւիրել մի քահանայի նոյն եկեղեցու ամբողջ ծուխը. միթէ նա կարող էր մոռացութեամբ չանել նոյնը իրան ծխականների մի քանիսի վերաբերմամբ, որոնցից շատերը, ինչպէս Ստեփան Նաղարեանց, Համբարձում Ցովհաննիսեան և այլք, ապրում են իրան՝ նախագահին կից տներում. ապա ինչպէս նա չը մոռացաւ և հրաւիրեց իրան մի քանի ուրիշ ծխականներին, որոնք ապրում են Հաւլաբար. միթէ նա չէր ճանաչում այն եօթ հին ծխականներին, որոնց վանդում էր եկեղեցուց, քանի որ հէնց ինքն է շատերին պսակել, նրանց երեխաներին կնքել, ննջեցեալներին թաղել ու տօներին տները օրհնել: Վերջապէս, ինչպէս նոյն ծխականները մասնակցում էին առաջվայ ընտրութիւններին, նախագահութեամբ նոյն տէր-Ներսէս Տէր-Բարսեղեանի. ապացոյց դրա նախկին արձանագրութիւնները, որոնք մինչև օրս պահպանվում են կոնսիստորիայում:

Գուցէ քահանան իրան արդարացնի նրանով, որ ով ցուցակի մէջ չէր գրված, պէտք է յայտնէր վաղօրք. բայց դրանով էլ չէ կարող արդարանալ, որովհետև մի քանիսի մասին, ինչպէս է, օրինակ, Համբարձում Ցովհաննիսեան, երեք օր առաջ է յայտնված նրան, և նա խոստացել էր ցուցակ գցել, բայց չէր արել:

Ժողովականները ահագին մեծամասնութեամբ յայտնեցին նախագահին, որ այսպիսի ապօրինի ժողովում մասնակցել չեն կարող և պէտք է հեռանան, մինչև որ բոլոր ծխականները չը հրաւիրվին, ուստի պահանջեցին, որ նա արձանագրի իրանց բողոքը, բայց նախագահը չը համաձայնեց և մինչև անգամ երկար ժամանակ թոյլ չէր տալիս, որ գոնէ իրանք արձանագրեն, ասելով. «գնացէք եկեղեցուց դուրս և ինչ որ ուզում էք գրեցէք այնտեղ, իսկ եկեղեցում բողոք չէ կարելի գրել». այդպիսով նա կը նշանակի չէր ուզում հնազանդվել նոյն իսկ առաջնորդի հրահանգին:

Վերջի վերջոյ ժողովականներից մէկը, այն է ծերունի Գրիգոր Իզմիրեանցը, արձանագրեց եկեղեցում բողոքը, որը և ստորագրեցին համարեա բոլորը, բացի մի 10—12 մարդուց: Նախագահ քահանան դարձեալ ապօրինի կերպով կատարեց ընտրութիւնը:

Զրկինեանց եկեղեցու ծխական՝

Սամսոն Ցարութիւնեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 20-ին

Խնդրում ենք «Մշակի» մէջ բարեհաճէք տպագրել այս նկատողութիւնը:

Երէկ, յունիսի 19-ին, ինչպէս բոլոր եկեղեցիներում, նոյնպէս և Հաւլաբարի Էջմիածնեցոց եկեղեցում կատարվեց պատգամաւորների ընտրութիւն:

Նախագահում էր տէր-Ներսէս Աբովեանց: Նիստը բացվեց մօտ 200 ծխականների մասնակցութեամբ: Ըստ կանոնին ժողովականների, թերթիկներ բաժանվեցին և ամեն մարդ իր ցանկացած թեկնածուների անունները գրելով՝ թերթիկները վերադարձվեցին նախագահին, առանց մի փոքր անկարգութիւն անգամ տեղի ունենալու: Թերթիկները հաւաքելուց յետոյ, նախագահը յայտնում է ժողովականներին, որ ընտրութիւնը պէտք է համարել չը կայացած, և մինչև անգամ ուզում էր հրապարակով այրել գրված թերթիկները: Բայց, ի հարկէ, ժողովականները ընդդիմացան, քանի որ ոչ մի անկանոնութիւն չէր եղել, ոչ մի առիթ չը կար ընտրութիւնն անկանոն համարելու, ուրեմն և նախագահ քահանան իրաւունք չունէր թերթիկները այրել կամ ոչնչացնել:

Չը նայելով նախագահի դիմադրութեանը, ժողովականները պնդեցին իրանց ասածի վրա և թերթիկները վեր առնելով՝ գնացին ուղղակի սրբազան առաջնորդի մօտ: Ընտրողներից երկու հոգի ներկայացան սրբազանին, իսկ մնացածները սպասեցին առաջնորդարանի բակում: Ներկայացողները յայտնեցին առաջնորդին եղելութիւնը և ներկայացրին 164 թերթիկներ, որոնցով ընտրված են եղել պատգամաւորներ, խնդրելով սրբազանից, քանի որ ոչ մի զեղծում տեղի չէ ունեցած, ընտրութիւնը համարել կանոնաւոր: Սրբազանը պատասխանեց, թէ ինքն կը ստուգէ և հետևանքը կը յայտնէ: Այժմ սպասում ենք սրբազան առաջնորդի վճռին: Մենք յոյս ունենք, որ առաջնորդը, ճշմարտութեանը պաշտպան հանդիսանալով, ընտրութիւնը կայացած կը համարի, որով և տեղիք չի տայ նոր բողոքների ու դժգոհութիւնների ժողովրդի մէջ:

Էջմիածնեցոց եկեղեցու ծխականներ՝ Աւետիք Ահարոնեան, Սարգիս Ցարութիւնեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 20-ին

Ամսիս 19-ին, Մողնու եկեղեցում, կանանց դասում կատարվող պատգամաւորական ընտրութեան ժամանակ, խուռն բազմութեան մէջ, ժողովի աղմկալից բոպէներում, ես, մի վայրկեան զգալով ինձ իբրև մի սովորական ընտրողական ժողովատեղիում, ինքնամոռացմամբ թոյլ տուի ինձ ծխախոտ վառել, որ և իսկոյն դէն գցեցի, երբ ինձ նկատեցին շուրջս նստած մի քանի հոգի:

Ենթադրելով որ այդ դէպքը կարող էր սխալ մեկնութիւնների տեղիք տալ նոյն իսկ իմ կուսակցական բարեկամներին իմ զգացումների նկատմամբ դէպի հասարակական սրբավայրը,— շտապում եմ յայտնել, որ դա մի պատահական սխալմունք էր իմ կողմից, որի մասին ես ինքս շատ ցաւում եմ և զղջում:

Ա. Արասխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ Թիւրքաց-Հայաստանի ոչ մի քաղաքում չէ հիմնված և ոչ մի մասնաժողով, որը նուիրատուութիւններ ընդունէր և օգնէր սովեալներին:

—

Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ յայտնի Նաղըմ բէյ, որը պոլիցիայի մինիստրի պաշտօն է վարում, ստացել է փաշայութիւն: Նաղըմ բէյ, այժմ Նաղըմ փաշա՝ վերջին տարիներս յայտնի է դարձել Կ. Պոլսում, իբրև վերին աստիճանի հմուտ խուզարկիչ: Նրա ձեռքով վերջին տարիներս հարիւրաւոր մարդիկ մեղադրվեցին քաղաքական յանցանքների մէջ և կալանաւորվեցին:

—

Մեզ հեռագրում են Էջմիածնից, յունիսի 18-ից. «Արդար Ցովհաննիսեան երէկ հեռագրով խընդրել է Կաթողիկոսից՝ յետաձգել ընտրութիւնը»: Նոյն օրը կէսօրից յետոյ ստացանք Էջմիածնից հետևեալ հեռագիրը. «Խնդիրքը մերժված է»:

—

Մենք ստացանք Բաթումից, 19 անձանց ստորագրութեամբ մի նամակ, որով յայտնում են, որ Բաթումից ուղարկված 123 անձանց բողոքը չինած, կեղծ և խաբեբայական չէ: Մենք զարմանում ենք այդ նամակը ստորագրողների միամտութեան և յանդգնութեան վրա. նախ՝ 19 մարդիկ չեն կարող 123 ստորագրութիւնների կողմից խօսել, և երկրորդ՝ իրանք, այդ 19 անձինք, որոնք մեծ մասամբ անգրագէտներ են, ինչպէս երևում է, կրկին անգամ զոհ են դարձել ագիտատների ձեռքում, տալով իրանց ստորագրութիւնները: Այդպիսի չինած և արհեստական նամակներով ոչինչ չի լինի.—ապացուցված իրողութիւն է, որ Բաթում չինած բողոքը կեղծ է, խաբեբայական է, արդիւնք ագիտատների, խաչագողական դիտաւորութիւնների, և այդ պատճառով մենք վերջնականապէս փակում ենք այս հարցը, համոզված լինելով, որ այլևս ոչ ոք յանդգնութիւն չի ունենայ Բաթումի մէջ այդպիսի խաղեր խաղալու:

—

Այս տարի, ինչպէս երևում է մեզ հասած տեղեկութիւններից, չերամի բերքը ընդհանրապէս առատ է և աջող: Ցարաբաղդարար, բօժօժի գինը առհասարակ շատ ընկած է:

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Բարեգործական ընկերութեան խորհուրդը յայտնում է, որ ստանալով հետևեալ նուէրները. 1) ի նպաստ սովեալների՝ Գիշինեվից, Ցուսիկ վարդապետից—50 ր., Թիֆլիսի հեռագրատան ծառայողներից—7 ր. 75 կոպէկ, Գօրիսից՝ պ. Մէլիք-Ազարեանցի միջոցով—125 ր., օրիորդ Պապայեանի կօնցերտի արդիւնքի մնացորդ—50 ր., կաղմարար Խաչատուրեանից—5 ր., Բաթումից, պ. Ա. Սարուխանեանի ձեռքով հանգանակած—121 ր., «Մշակի» խմբագրութիւնից՝ երկու անգամով—200 ր., մի անձից—1 ր., ընդամենը 569 ր. 75 կ., որով նախկին ստացածների հետ լինում է բոլորը 7356 ր. 16 կ. և 2) ի նպաստ ընկերութեանս՝ Կարա-Մուրզայի կօնցերտից—213 ր. 40 կ. (մի մասը ապառիկ է դեռ), բժշկապետ Լօրիս-Մէլիքեանից, ի յիշատակ իր հանգուցեալ հօր—100 ր., բժշկապետ Արծրունու դասախօսութիւնից—30 ր., յայտնում է թէ նուիրատուներին և թէ հանգանակողներին իր խորին շնորհակալութիւնը»:

—

Մեզ հաղորդում են, որ Հրատարակչական ընկերութիւնը շուտով պէտք է սկսի տպագրել Գարագաշեանի յայտնի «Քննական Պատմութիւնը», որի առաջին մասը տպագրվել է Կ. Պոլսում, բայց միւս մասը մինչև այժմ անտիպ է:

—

ԴԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Վերջերս Աստրախանի թեմում տգէտ և անբան հոգևորականների թիւը բազմացաւ. այդ անհերքելի փաստ է: Զանազան աղաների ձեռնասուն տիրացուները և անյայտ փէշակի տէր մարդիկ՝ ոսկու պարկը վզներին կախած, աղայի երաշխաւորական նամակն էլ ձեռներին՝ ներկայանում էին ում հարկն և անխափան ձեռնադրվում: Նոյն դրութիւնը շարունակվում է և այժմ: Գոնէ առաջ ծածկում էին իրանց խայտառակ արարմունքը կեղծ դիմակի տակ, բայց այժմ խաւարամիտ մամուլի և տգէտ տիրացուներին հովանաւորողների քաջալերութեամբ, օրը ցերեկով են իրանց աւանդական փէշակը գործ դնում՝ անարժան տգէտներին առաջ քաշելով և արժանաւորներին դիտմամբ արգելք դնելով»:

—

ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ մեզ գրում են. «Այստեղ ուսումնարան հիմնելու հարցը շատ անգամ արծարծվել է: Հասարակութիւնն ևս այդ ցանկութիւնն ունի: Սակայն գործին գլուխ անցնող չը կայ և դպրոցական հարցը տատանման մէջ է մնում: Փողի առանձին կարիք չը կայ, որովհետև տեղական հասարակութիւնը ինքն իր վրա կարող է առնել նիւթերի պատրաստութեան և կառուցման գործը: Իսկ միւս անհրաժեշտ բաների համար կարելի է մասամբ օգտվել եկեղեցապատկան գումարով, որը մուրհակներով մնում է սրա նրա մօտ: Կողմնակի նուէրներ էլ կարող են լինել զանազան անհատներից: Ի միջի այլոց, խոստացել է մի խոշոր գումար նուիրել երևանցի հարուստ վաճառական պ. Եղիազարեանց, միայն թէ ուսումնարանի գործը գլուխ գայ»:

—

Նախիջևան գաւառի ՏԱՆԱԿԵՐՏ գիւղից, այնտեղի դպրոցի հոգաբարձութեան անդամ Քրիստափոր Իսաղուլեանց խնդրում է մեզ տպել հետևեալը. «Բացուից Ամի Ամիեանց և Ստեփան Մնացականեանց, այնտեղ եղող տանակերացիներից հաւաքել են, յօգուտ Տանակերտ գիւղի Խրիմեան-Մարիամեան միդասեան ուսումնարանի՝ 100 ռուբլի, և ուղարկել ինձ: Սրանով յայտնում եմ շնորհակալութիւն նուիրատու պարոններին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻ ԿՕՆԴԱԿԸ

—

Շուտով կը հրատարակվի Լեոն XIII պապի նոր կօնդակը: Այդ կօնդակի մէջ պապը յիշում է իր յօրելեանը և յայտարարում է, որ կամենում է, Քրիստոսի նման, իր կեանքի վերջում հրաւիրել բոլոր մարդկանց, առանց ցեղի և ազգութեան խտրութեան, միանալ և մի հաւատ կազմել: Խօսելով ոչ քրիստոնեայ ժողովուրդների մասին, պապը խոստանում է, որ եկեղեցին եռանդով կը շարունակէ հոգալ, որ նրանք ճշմարիտ հաւատի պաշտօնեներ դառնան: Քրիստոնեայ ժողովուրդներին պապը յիշեցնում է եկեղեցական միութեան մասին:

Ապա պապը դիմում է ուղղափառ յոյն եկեղեցիներին և համոզում է նրանց ընդունել Հռոմի քահանայապետի գլխաւորութիւնը, այսինքն ձեռք զարկել ունիային, որ ընդունված է Լիոնեան և Ֆլորէնտինեան ժողովներում: Ներկայումս, կօնդակի խօսքերով, ուղղափառների յարաբերութիւնները դէպի կաթոլիկները աւելի բարեկամական են դարձել, այնպէս որ մնում է միայն կատարելապէս միացնել հռոմէական և յունական եկեղեցիները: Պապը խոստանում է, որ ուղղափառ եկեղեցիների սովորութիւնները, ծէսերը և հին արտօնութիւններն անձեռնմխելի կը մնան: Մանաւանդ նրա այդ խոստումները վերաբերում են սլաւեան ուղղափառ ժողովուրդներին:

Կօնդակը վերաբերում է նոյնպէս դէպի բողոքականները կաթոլիկ եկեղեցու ունեցած յարաբերութիւնների հարցին: Բողոքականներին պակասում է առաջնորդող ձեռք հաւատի և հոգևոր հեղինակութեան մէջ: Մի քանի բողոքականներ արդէն հերքում են Քրիստոսի աստուածութիւնը և սուրբ գրքերի աստուածային ծագումը և ընկել են նիւթապաշտութեան և նատուրալիզմի մէջ: Կօնդակը համոզում է աւելի լուսաւորված բողոքականներին՝ վերադառնալ կաթոլիկ եկեղեցու ծոցը: Պապը նոյն խնդիրքով դիմում է և ուրիշ բողոքականներին, որպէս զի բոլորը դաւանեն մի հաւատ, յոյս և սէր, որոնք հիմնված են մի և նոյն աւետարանի վրա:

Պապը խորհուրդ է տալիս կաթոլիկներին ևս, ի նկատի ունենալով առաջիկայ վտանգները, միաբան լինել և յարգել նրա հոգևոր իշխանութիւնը: Ներշնչված հաշտութեան հոգով, եկեղեցին պէտք է հաշտ ապրի աշխարհային իշխանութիւնների հետ և դիջումներից չը հրաժարվի: Կօնդակը յարձակվում է ֆրանմասոնների վրա, որպէս եկեղեցական միութեան թշնամիների վրա: Իտալացիները և ֆրանսիացիները պէտք է թօթափեն իրանցից այդ ազանդի բռնակալ լուծը: Կօնդակը, վերջապէս, խօսում է ժամանակակից Եւրոպայի միլիտարիզմի դէմ:

Վերջաբանութեան մէջ պապը քննում է սոցիալական հարցերը և առաջարկում է լուծել նրանց՝ համաձայն աւետարանական վարդապետութեան: Բացի դրանից, քաղաքականութեան շրջանում նա խորհուրդ է տալիս կառավարիչներին՝ գործել ժողովուրդների հետ համաձայն և ապացուցանում է, որ ժողովուրդը իրաւունք ունի կառավարութեան այնպիսի ձև ունենալ, որպիսին ինքն ուզում է: Պապը խորհուրդ է տալիս կառավարութիւններին ամեն կերպ պաշտպանել կրօնական միութիւնը, որպէս զի չը կրկնվեն անցեալ դարու արիւնահեղ անցքերը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑԻՑ

—

Աղբակ, մայիսի 20-ին

Ինչպէս բոլոր Տանկաստանը, նոյնպէս և Աղբակը իր ծայրագոյն թշուառութեանը հասած է. կանանց բռնաբարում, կայքերի յափշտակութիւն, անասնոց գողանալ՝ ամենօրեայ և սովորական գործ է այստեղ: Թէև առերես պաշտօնեայք կը գանգատին հայերու առջև այս բոլոր անկարգութեանց համար, բայց ինչ օգուտ: Այդպիսի անել վիճակէ ազատելու համար շատեր փախել են դէպի Պարսկաստան:

Սահմանէն ցորեն տանել խստիւ արգելված է: Այժմ ի Պաշգալէ ցորեանի բեռը $7^1/_2$ մէճիդ է, իսկ Վան 2 ոսկի: Վանդ կայ աւելի բարձրանալու: Ցարդը և խոտը այնքան բարձր գին է ստացած, որ ծերունիք իրանց կեանքի մէջ չեն յիշեր մի այդպիսի գին: Այս տարի ձմեռը սովորականէն շատ աւելի երկար տևեց. շատ անասուններն, առանց ուտելիքի մնալով՝ կը մորթուին՝ ազատելու համար սովամահ լինելէ:

Աղբակու ճանրան ձիւն լինելով, կարելի չէ դիւրութեամբ երթևեկել, եթէ ոչ մինչև հիմա բոլոր աղբակեցիք արդէն գաղթած էին դէպի Սալմաստ: Անհամբեր կը սպասեմք եղանակների տաքնալուն և ճամբաներու բացվելուն:

Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մադիարական մի կղերական լրագիր յայտարարում է, թէ ունգարական սէյմի բոլոր մագնատները, որոնք քաղաքացիական ամուսնութեան

վերաբերեալ օրէնքի համար ձայն են տուել, բանադրանքին կենթարկվեն:

—Մայնցի քաղաքային խորհուրդը Գերմանիայում ձայների մեծամասնութեամբ վճռեց արձան կանգնեցնել հռչակաւոր բանաստեղծ Հէնրիխ Հէյնէին:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՐԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի: Ֆինանսների մինիստրութիւնը վճռեց՝ քաղաքային անշարժ կալուածքը գնահատելու ժամանակ եկամուտը համարել 3-ից մինչև 4%, իսկ գիւղական կալուածքներինը—5%:

—Նախագծվում է երկաթուղիների գծերի վրա շինել 307 ցորենապահեստներ 80 միլիոն պուդի համար:

ՇԱՆԽԱՅ, 17 յունիսի: Եապոնիան հրաժարվում է մաքրել Կորէյա և առաջարկում է ձեռք ձեռքի տուած գրաւել: Չինաստանը մերժում է այդ առաջարկութիւնը և մեծացնում է իր ծովային և ցամաքային ույժերը:

ՊԱՐԻԶ, 17 յունիսի: Բիւրդօ այսօր առաւօտեան յայտնեց Պէրիէին, որ իր առողջական դրութեան պատճառով, ինքն, Բիւրդօ, հնարաւոր չէ համարում յանձն առնել իշխանութեան ծանր լուծը: Պէրիէ այսօր առաւօտեան խորհրդակցում էր Շալմէլի հետ գործերի դրութեան մասին, որից յետոյ առաջարկեց Դիւպիւին մինիստրութիւն կազմել: Դիւպիւի վաղը նոր տեսակցութիւն կունենայ Պէրիէի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Կէլէցկայա նահանգը վտանգաւոր է յայտարարված խօլերայի կողմից:

ՄԱՐՍԷՅԼ, 18 յունիսի: Կարնօի կեանքի դէմ եղած դաւադրութիւնը երևան է հանված. ոստիկանութիւնը գտել է դաւադիրների հետքերը, որոնց վերջին ժողովը կայացաւ Սէտտում, ուր և վիճակ ընկաւ Կազէրօին: Կալանաւորութիւններ են լինելու:

ՊԱՐԻԶ, 18 յունիսի: Մարսէլից տեղեկութիւններ են հաղորդում Կարնօի դէմ եղած դաւադրութեան մասին: Մի զինւոր, որը ներկայումս գտնվում է զինւորական բանտում, պատմեց ուրիշ կալանաւորներին, և ապա դատարանական վարչութեան պաշտօնեաներին էլ, որ եօթն անարխիստներից բաղկացած խումբը Սէտտում մահվան դատապարտեց Կարնօին՝ Վայեանին և Անրիին մահվան պատժին ենթարկելու համար: Վիճակն ընկաւ Կազէրօին, որը և Լիօն ուղևորվեց՝ Կարնօին սպանելու համար: Զինւորը բոլոր երեք դաւադիրների անունները տուեց, որոնք կամ արդէն կալանաւորված են, կամ շուտով կը կալանաւորվեն:

ԼԻՕՆ, 18 յունիսի: Կազէրիօ աւելի արամադիր է դառնում խօսելու, նրա ջղային գրգռումն անցաւ և երէկ հնարաւորութիւն եղաւ մի քանի մերկացումներ լսել նրանից այն միջազգային դաւադրութեան մասին, որի կատարողն էր նա:

ՊԱՐԻԶ, 19 յունիսի: Այստեղ հասաւ գեներալ-ադիւտանտ Օբրուչէվ՝ Կարնօի թաղմանը ներկայ լինելու համար:—Երեկոյեան 10 ժամին դագաղը Կարնօի մարմնով դրեցին կատաֆալկի վրա, որ շինված է Ելիսեան պալատի հանդիսաւոր բակում: Առաւօտեան 3 ժամին բոլոր փողոցները Ելիսեան պալատից մինչև Նօտր-Դամը՝ ծածկված են ժողովրդով և ամբոխը գնալով աճում է: Համաձայնութեան հրապարակը, Օտէլ-Դէվիլ արդէն սևանում են ժողովրդի բազմութիւնից: Ամբոխը իրան հանդիստ է պահում:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունիսի 17-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	20 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	$92^1/_2$ »
Ոսկի — — արժէ . .	7 »	51 »
Մաքսային կուպօններ — . .	150 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
5% ոսկեայ ռէնտա 1884 թ. . . .	160 »	50 »
$4^1/_2$ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	— »	— »
— — երկրորդ —	— »	— »
Պետական երկաթուղային ռէնտա.	102 »	50 »
$4^1/_2$ ռէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	$96^5/_8$ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	190 »	— »
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	102 »	— »
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած.		
Պետերբ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	154 »	25 »
— — — թղթադ. .	101 »	75 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101 »	75 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	75 »
Օդէսայի — —	99 »	75 »
Թիֆլիսի — —	101 »	75 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	100 »	50 »
— — Քութայիսի — .	101 »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ ունի 5 դ. կարգի իրաւունք և երեք տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է հայոց ծխական դպրոցներում ունենալ ուսուցչի պաշտօն Ռուսաց լեզուից և թուաբանութիւնից:

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Астрахань, въ Армянское Агабабовское училище, учителю Вардану Аветовичу Шелковникову. (ամ. 2) (№ 67) 4—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ժընէվի համալսարանի Հասարակական գիտութիւնների ֆակուլտէտը աւարտած, ԿԱՄԵՆՈՒՄ Է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ կամ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ ունենալ հայոց հոգևոր դպրոցներից մէկում:

Պայմանների համար մինչև օգոստոսի 1-ը դիմել „Մշակի“ խմբագրատուն, յանձնելու Վ. Փափազեանցին: (№ 68) 3—5

ՆԵՐԿԵՐ



ՄԱԶԻ ՀԱՄԱՐ

Վ. ԳԻՆԻ

Վիեննայում

Իւխլից պատրաստած: Անվնաս դեղեր են մազն ու մօրուքը կարմ միջոցում սև, շէկ և բաց ու մուգ շագանակագոյն ներկելու համար: Մի սրուակի գինը ճանապարհի ծախսով 3 ռուբլի է:

Վ. ՍՈՒՐԻՍ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Կոլօկօլնայա 18.

(№ 8. ամս. 20) 8—8

Պետերբուրգի համալսարանական պատրաստում է հայ ուսուցիչներին ցենզի համար:

Հասցէն հարցնել. Солдатскій базаръ, церковный домъ, магазинъ Левона Худавердяна. (№ 67) 3—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ

Ցանկանում է տնային վարժուհու պաշտօն ունենալ ամառանոցներում, հայ ընտանիքում:

Հարցնել, Եփրեմ Ծատուրեանի լամպային խանութում: (№ 66) 2—3

Խնդրում եմ խմբին, ամառվայ արձակուրդներից յետոյ, ժողովվել սոյն տարվայ սեպտեմբերին: Տեղի և ժամանակի մասին կը յայտարարվի „Մշակում„:

Իմ հասցէն է: Тифлисъ, Вокзалъ, Кара-Мурза.

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

(№ 66) 3—3

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՌՈՒՆՈՎԻ ՄՕՏ

վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.

1) Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 ռուբլի:

2) կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ.: Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.

Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. Կարելի է ստանալ և վերադիր վճարով (наложн. платежъ). (№ 51) 10—10

ԱԲԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա. հատորի գինն է . . . . 3 ր.
Բ. հատորինը „ . . . . 4 ր.

Վաճառվում է Խիտդեկէլի գրավաճառանոցում, Գօլօվինսկի պրօսպեկտ:

Գրավաճառներին 10% զիջումն:

(№ 58) 7—10

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկաք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

№ 62 6—32

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Տ Է Ր—Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ի

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ: Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար:

Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն:

(№ 35) (եր. և շ.) 24—25

ԴԵՂԱԳՈՐԾ **Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ** ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրօնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:

(№ 67) 82—100 (և. շ.)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ ընկերութեան օգուտներին:

1894 թւի յունվարի 1-ին «Ռօսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանւորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ դիվիդէնդի փոխարէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում:

(№ 42) 13—15

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Іюня 1894 г. Типографія Канцел. Главноначальств. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.